community

The New Apostolic Church around the world

02/2022/AM

Ապրել միասնության մեջ

Խմբագրական
Բարի լուր բոլորի համար

Ժամերգություն
Միասին՝ Քրիստոսով

Եկեղեցական ուսմունք
Տեսակետ կյանքի
վերաբերյալ

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Բարի լուր բոլորի համար

Ժամերգություն

4 Միասին՝ Քրիստոսով

Մանկական անկյուն

10 Դավիթն ու Հոփսաթանը

12 Այցելություն Կալվինին՝ Լոնդոնում / Մեծ բրիտանիա/

Տեսություն

14 Կյանքը պահպանել – որտեղ որ հնարավոր է

Ընդհանուր լուրեր

18 2021՝ Պաշտոնը, կինը և Աստվածաչունչը

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Մասրել ֆելդեի
Կազմի ետևի լուսանկարը՝ ՆԱԵ Զամբիա

Բարի լուր բոլորի համար

Լուսանկարը՝ Միջազգային ԱԱԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

գիտե՞ք այն պատմությունը Հիսուսի մասին, երբ նա իր հայրենի քաղաք Նազարեթում Թորայից ընթերցումներ է անում սինագոգում: Նա կարդում է Եսայի մարգարեության 61, 1-2 –ից, որտեղ գրված է՝

,, Տիրոջ հոգին ինձ վրա է, դրա համար իսկ նա օծեց ինձ, ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկվածներին, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն, հռչակելու Տիրոջ ընդունելի տարին և մեր Աստծո վրեժխնդրության օրը, մխիթարելու բոլոր սգավորներին,,:

Եվ Հիսուսը նայեց հավաքված մարդկանց և ասաց՝ դա ինքն է / հմտ. Ղուկաս 4,21/:

Հիսուսը միշտ շեշտում էր, որ եկել է աղքատների, ճնշվածների, հիվանդների և սգավորների համար: Դրանք այն մարդիկ են , ովքեր առանձնահատուկ նրա կարիքն ունեն:

Սակայն, այստեղ բարի լուրը բոլորի համար է, նաև նրանց, ովքեր ասում են՝ ես աղքատ չեմ, ճնշված չեմ, հիվանդ կամ սգավոր չեմ: Ուրեմն՝ Ավետարանը նաև ի՞նձ համար է:

Այո, թեև այստեղ Հիսուսը խոսքն ուղղում է կոնկրետ աղքատներին, բայց այն ուղղված է նաև նրանց, ովքեր աղքատ են փոխաբերական իմաստով՝

- ովքեր հեզ են ու գիտեն, որ ողորմածության կարիք ունեն,
- ովքեր մեղքի պատճառով Աստծուց հեռանալու համար տառապում են,
- ովքեր մեղքի գերին են:

Նրանց է տեղեկացնում Հիսուսը Ավետարանը և ուղարկում է իր առաքյալներին՝ Ավետարանը տարածելու: Նաև այսօր դեռ կան առաքյալներ, մենք՝ բոլորս, ուղարկված ենք Աստծո կողմից, որպեսզի տեղեկացնենք Ավետարանը:

Ավետարանը բոլորի համար է, որովհետև բոլորը տառապում են մեղքի պատճառով: Մենք Աստծո կողմից կանչված ենք ասելու՝ Աստված ուզում է մարդկանց ազատել մեղքերից և տանել նորից դեպի իր հետ միասնություն:

Մի քանիսն ընդունում են Ավետարանը, մյուսները՝ ոչ: Եկեք դրանից մենք չվհատվենք: Դա չի խանգարի Տիրոջը՝ իր գործը լիակատար ավարտին հասցնել:

Սրտագին ողջույններով՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Միասին՝ Քրիստոսով

Նոր տարվա ժամերգությունը տեղի ունեցավ հունվարի 2-ին՝ Գիֆհորնի եկեղեցում / Գերմանիա/

Լուսանկարները՝ Սարսել Ֆեդրեի

Սրտանց սիրելի քույր-եղբայրներ, մենք շնորհակալ ենք սիրելի Աստծուն, որ հենց տարվա սկզբին մենք կարողացանք միասին հավաքվել և այս ժամերգությունն ապրել, թեև ոչ սովորական ձևով: Ես գիտեմ, որ այս նոր տարվա սկիզբը շատերի ցանկություններին չի համապատասխանում: Մենք այլ ցանկություններ կուզենայինք: Ամեն ինչի վրա դեռ կա համավարակի դրոշմը, ամեն ինչ դեռ անսովոր և բարդ է: Սակայն, սիրելի քույր-եղբայրներ, դա չի փոխում 2022 թվականի մեր ծրագիրը: Ծրագիրը կա և մնում է՝ մենք նախապատրաստվում ենք մեր Տեր և Վարդապետ Հիսուս Քրիստոսի գալստյանը: Սա դատարկ խոսք չէ, ես շեշտում եմ լիովին գիտակցելով՝ ոչինչ չի փոխի մեր ծրագիրը: Մենք սպասում ենք Տիրոջ գալստյանը և նախապատրաստվում ենք դրան:

Գործք առաքելոց 2,44

Հավատացյալներն ամենքը միասին էին, և ինչ որ ունեին, հասարակաց էր:

Այնպես չպետք է լինի, որ հոգսը, առօրյան, համավարակը և մնացած ամեն ինչ ճնշեն աստվածային կյանքը: Դրա վրա մենք պետք է ուշադրություն դարձնենք: Այդպես չպետք է լինի: Իհարկե, դա լուրջ պատճառ է, և մենք

Աստվածային կյանքը՝ կյանքն է միասնության մեջ

պատասխանատվությամբ պետք է վերաբերենք դրան, բանականությամբ, նաև Աստծուն վստահելով, գիտակցելով, որ մենք անում ենք մերը, սիրելի Աստված անում է իրենը: Դա չպետք է մեզ խանգարի, որ մենք շարունակենք նախապատրաստվել Քրիստոսի գալստյանը: Այստեղ ես վտանգ եմ տեսնում, որը լայն տարածում է գտնում և լիովին ծանրաբեռնում մեզ: Այդպես չի կարող լինել: Սիրելի քույր-եղբայրներ, հիշենք մեր ծնողներին կամ տատիկ պապիկներին, ովքեր ապրել են պատերազմական ժամանակներ: Ես չեմ ուզում ամբողջը դրամատիկ ներկայացնել, դրանք այլ պայմաններ էին: Բայց, նրանք շարունակում էին նախապատրաստվել Տիրոջ գալստյանը: Ես մտածում եմ այլ երկրների բազմաթիվ քույր-եղբայրների մասին, որտեղ ամեն ինչ ավելի վատ է, ինչպես, օրինակ, Արևմտյան Աֆրիկայում, Մալիում, Բուրկինա Ֆասոյում, որտեղ մեր քույր-եղբայրների մեծամասնությունը իսլամիստական, ջիհադիստական ծայրահեղականների վտանգի ներքո են ապրում:

Ես կարող եմ վկայել, որ նրանք շարունակում են նախապատրաստվել Տիրոջ գալստյանը: Ես մտածում եմ Միյանմարի կամ Լատինական Ամերիկայի մեր քույր-եղբայրների մասին, ովքեր ստիպված են ապրել ամբողջովին վատ պայմաններում: Ես մտածում եմ այստեղի՝ Գերմանիայի քույր-եղբայրների մասին, ովքեր հիվանդությունների պատճառով ծանր վիճակում հայտնվեցին, ովքեր զրկանքների մեջ են, ովքեր վատ լուր են ստանում մեկը մյուսի հետևից: Նրանցից սպասում ենք, իսկ դա շատ նորմալ է, որ նրանք ,այնուամենայնիվ, շարունակեն նախապատրաստվել Տիրոջ գալստյանը: Ինչը վերաբերում է նրանց, վերաբերում է և մեզ: Ես չեմ ուզում սա շարունակ թեմա դարձնել, սիրելի քույր-եղբայրներ, ուշադրություն դարձնենք սրա վրա: Մենք գործին վերաբերում ենք ողջախոհությամբ, պատասխանատվությամբ, Աստծուն վստահելով, դա չպետք է և չի կարող խանգարել մեզ, որ մեր առաջնայնությունը Հիսուս Քրիստոսի գալուստը լինի: Դրան ենք նախապատրաստվում մենք, ինչ էլ ուզում է լինել:

Մենք սպասում ենք, որ Տեր Հիսուսը գա և մեզ իր մոտ տանի: Ես այս ,, մեզ,,-ը շատ հստակ շեշտեցի, քանի որ Տերը չի գալիս իր հետ տանելու որոշակի թվով սիրելի, սիրալիր անհատների: Նա գալիս է, որ համայնքին տանի իր մոտ, հավատացյալների համայնքին, որը ստեղծվել է Սուրբ Հոգու ներգործությամբ՝ Քրիստոսի հետ միավորվելու նպատակով: Նա է հարսնացուն, Տեր Հիսուսը գալիս է, որ նրան իր հետ տանի: Եվ դրա համար էլ այս տարվա մեր նշանաբանն է՝ ,, Միասին՝ Քրիստոսով,,: Մենք ուզում ենք հավիտենական միասնություն ունենալ Աստծո հետ: Ովքե՞ր են համարվում հարսնացու: Դա նրանք են, ովքեր լցված են նրա կյանքով և համապատասխանում են նրա կամքին, ովքեր ցանում են արդեն այսօր միասնություն ունենալ Աստծո հետ: Նրանք առաջնորդվելու են դեպի Աստծո հետ հավիտենական միասնություն: Նրանք արդեն այսօր ուզում են միասնություն ունենալ Աստծո հետ, որովհետև նրանք նպատակադրված են, նրանք լցված են նրա կյանքով: Ես հաճախ եմ շեշտել, աստվածային կյանքը սահմանվում է որպես կյանք միասնության մեջ:

Սուրբ Երրորդություն Աստվածը Աստված է Հոր, Որդու և Սուրբ Հոգու միաբանությամբ: Դա աստվածաբանի փայլուն գաղափար չէ, դա աստվածային ճշմարտություն է: Դրանում ահավոր շատ բան կա թաքնված: Հայր Աստվածը, Որդի Աստվածը և Սուրբ Հոգի Աստվածը երեք անձինք են, ովքեր մշտապես կապի մեջ են և ովքեր միշտ միասին են: Աստված մարդուն ստեղծել է Աստծու պատկերով: Դա նաև արտահայտվում է նրանով, որ նա մարդուն ոչ թե որպես առանձին անձ է ստեղծել, այլ ստեղծել է որպես տղամարդ և կին, ովքեր պետք է միասնության մեջ ապրեն՝ նույն էությունը, նույն բնությունը, նրանք միմյանց կարիքն ունեն և նրանք պետք է միասնության մեջ ապրեն՝ Աստծո հետ միասնության և միմյանց հետ միասնության մեջ: Եվ ինչքան ժամանակ դա այդպես լինի, նրանք կհամապատասխանեն Աստծո կամքին: Նրանք ունեին միասնություն Աստծո և միմյանց հետ: Մեղքի մեջ ընկնելուց հետո դա փոխվեց, բայց Աստծո կամքը դա էր: Ո՞րն է Որդի Աստծո կամքը իր հարսնացուի համար: Հայր, թող որ նրանք միասին լինեն, ինչպես ես ու դու: Դա ցույց է տալիս, որ աստվածային կյանքը՝ դա կյանքն է միասնության մեջ: Մենք պետք է լցված լինենք այդ աստվածային կյանքով և լիասին լինենք Աստծո հետ, նաև միասին լինենք միմյանց հետ և ձգտենք, որ հավատացյալների միասնությունը միշտ ուժեղանա և տեսանելի դառնա:

,,Միասին՝ Քրիստոսով,, արտահայտությունը նշանակում է, որ մենք առաջին քրիստոնյաների նման միշտ հանդիպում ենք միմյանց և միասին ժամերգություն ենք տոնում: Գործք առաքելոցը տեղեկացնում է, որ առաջին քրիստոնյաներն այն բանից հետո, երբ ընդունեցին Սուրբ Հոգու

Ժամերգության այցելելը ևս հասարակական հարթություն ունի

շնորհները, միմյանց հետ լինելու պահանջն ունեին: Նրանք իրար կողքի էին և բոլոր գործերում միասին էին: Նրանք կանոնավոր գնում էին տաճար, այնտեղ ապրում էին հրեական ժամերգությունը և հետո միասին հավաքվում էին տներում, որպեսզի միասին տոնեին Սուրբ Հաղորդությունը՝ որպես քրիստոնյաներ: Նրանք հոգում էին դրա համար և ասում՝ ,, Եկեք, ամեն ինչ միասին անենք, ոչ ոք ոչ մի բանի պակաս չի ունենա,,: Այդպես էր Երուսաղեմի համայնքում, բայց, մյուս համայնքներում այդպես չէր: Մեր ժամանակներում այլ է: Յուրաքանչյուրը կարող է իր ավտոմեքենան ունենալ, իր սեփական կարողությունը-բայց խոսքը երկրային հարստությունների մասին չէ, խոսքը հոգևոր հարստության մասին է: Մենք ընդհանուր շատ բան ունենք: Մենք ունենք նույն կանչը, մենք ունենք նույն հավատը, մենք ունենք նույն Տերն ու Վարդապետը, մենք ունենք նույն ապագան՝ Քրիստոսը մեր միակն ու ամեն ինչն է: Եվ քանի որ մեզ համար շատ կարևոր է, որ մենք դա միասին ունենանք, պարզապես կարիք ունենք հավաքվելու և ժամերգության ժամանակ Աստծո ու միմյանց հետ միասնություն կազմելու:

Այս առումով Պողոսն ասում է՝ քանի որ մենք ունենք ոգի, մենք մոտիվացված ենք միաբանության և պահանջ ունենք հավաքվելու, որպեսզի միահամուռ, մեկ բերանով գովաբանենք Աստծուն: Հետևաբար, ով հավատ ունի, ով ունի Սուրբ Հոգու շնորհները, նա միաբանվում է, համայնքը, որը լցված է Սուրբ Հոգով, համերաշխ է և միահամուռ հավաքվում է, որպեսզի մեկ բերանով Աստծուն գովաբանի և փառաբանի: Այսինքն՝ նրանք պահանջ ունեն միմյանց հետ ժամերգությունն ապրելու և Աստծուն գովաբանելու, պատվելու և փառաբանելու, որովհետև միասին շատ բան ունեն: Տեր Հիսուսը մեզ կոչ է անում միասնության, որովհետև նա ուզում է մեզ հետ միասին աղոթել, ուզում է մեզ հետ միասին ուտել, նա ուզում է մեզ՝ բոլորիս միասին ուժեղացնել, ինչպես նա անում էր իր աշակերտների հետ՝ Եկեք բոլորդ դեպի ինձ: Նա հոգում է մեզ համար, նա մեր մեջ է, մեզ հետ՝ միասին:

Անձնական միտք է այն, որ ժամերգության գնալը նաև հասարակական հարթություն ունի: Ինձ սխալ չհասկանք, սա քաղաքական խոսք չէ, բայց սա մարդկանց բնույթն է, երբ նրանք ուզում են իրենց կարծիքը հայտնել, և եթե դա իրենց համար կարևոր է, ապա նրանք գիտեն, որ եթե միայնակ գործեն, դա ոչինչ չի բերի: Հետո ի՞նչ են անում այդ ժամանակ, որպեսզի իմանան մեր կարծիքը, թե ինչ ենք ուզում մենք: Այդ ժամանակ հավաքում են ստորագրություններ կամ դուրս են գալիս ցույցի և միասին անցնում փողոցներով, քանի որ գիտեն, որ գործարքը կատարվում է: Եթե մենք այդ ամենը միասին անենք, եթե բոլորս ստորագրենք, եթե մենք բոլորս նույն նամակն ուղարկենք, եթե բոլորս երթի դուրս գանք և ցույց անենք, ապա դա կնկատվի: Դրանից և հասկանում են, որ միասնությունն ավելին է բերում: Սիրելի քույր-եղբայրներ, որպես քրիստոնյաներ մենք պետք է տեղեկացնենք, որ մենք համաձայն չենք, որ աշխարհին տիրում է չարը: Մենք դեմ ենք չարի տիրապետությանը: Մենք կողմ ենք Հիսուս Քրիստոսի տիրակալությանը: Ես հիմա այսպես եմ ասում՝ լավ է, երբ մենք ամեն ինչ իր

տեղում տեղեկացնենք, բայց, երբ քրիստոնյաները ժամերգության չեն հավաքվում, ապա դա իսկապես շատ բան չի բերում: Ժամերգությանը մասնակցելը հասարակական հարթություն ունի: Դա վկայում են քրիստոնյաները՝ մենք համաձայն չենք այն բանի հետ, ինչ կատարվում է, մենք դեմ ենք չարին, մենք կողմ ենք Հիսուս Քրիստոսին: Մենք միասնություն ենք ապրում ժամերգության ժամանակ:

Բայց, սա ավելի հեռուն է տանում: Ժամերգության ժամանակ յուրաքանչյուրը նստում է իր տեղում, այո, կարելի է ողջունել, կարելի կարճ միմյանց հետ զրուցել, բայց դա վերջը չէ: Դեռ շատ բան է սպասվում: Մենք պետք է սովորենք միասնության մեջ ապրելը: Դա մեկ այլ քայլ է: Համայնքի միասնության համար մենք պետք է սովորենք միասնության մեջ ապրելը: Միասնության մեջ ապրել նշանակում է, որ մենք պետք է սովորենք հաղթահարել այն, ինչը բաժանում է մեզ: Այնքան շատ բան կա, որ բաժանում է մեզ, և դա բացարձակ նորմալ է: Մենք բոլորս տարբեր ենք, յուրաքանչյուրն ունի իր կարծիքը, յուրաքանչյուրն ունի իր գաղափարները, յուրաքանչյուրն ունի իր տեսակը, և դա լիովին նորմալ է: Մենք պետք է միայն սովորենք դրա հետ համակերպվել: Դա չի նշանակում, որ մենք մեր անհատականությունը պետք է մոռանանք և համապատասխանենք նույն ձևանմուշին, բոլորս նման դառնանք, դա չէ գործի նպատակը: Մենք պետք է սովորենք ընդունել մերձավորի այլ լինելը և դրա հետ հաշվի նստենք: Ես նկատել եմ, որ այս ժամանակներում մարդիկ ավելի ու ավելի շատ են հիմարաբար օգտագործում հաղորդակցության միջոցները:

Երբեք մարդկանց համար հաղորդակցվելու այսքան շատ հնարավորություններ չեն եղել: Իսկ ի՞նչ են անում նրանք: Ես ավելի ու ավելի շատ եմ նկատում, որ նրանք զբաղվում են միայն նրանցով, ովքեր այդպես են մտածում և այնպիսին են, ինչպիսին՝ իրենք: Սա մի խումբ է: Մեկ այլ տեղ մեկ ուրիշ խումբ է, ովքեր զրուցում ու զրուցում են միմյանց հետ, միմյանց ներսում, և նրանք կենտրոնացած են նրանց վրա, ովքեր մտածում են մեզ նման: Սա չէ գործի իմաստը: Մենք պետք է սովորենք ընդունել մերձավորի այլ լինելը և հաշտվել դրա հետ: Դա նրա համար չէ, որ հիմա խաղաղություն լինի, ամեն ինչ նորմալ լինի, ոչ, դա ավելի հեռուն է տանում: Մենք պետք է սովորենք և նաև ապացուցել, որ այն, ինչ մենք ընդհանուր ունենք, մեզ համար ավելի կարևոր է, քան այն, ինչը բաժանում է մեզ: Սա շրջադարձային է: Մենք միասին ունենք Քրիստոսին: Մենք ունենք մեկ ապագա, մեկ անգամ ևս՝ մեկ կոչում, կատարելու մեկ ծառայություն : Այդ ամենը մեզ համար ավելի կարևոր է, քան սեփական կարծիքը, քան իմ տարակարծությունը: Եվ ես տեսնում եմ մի մեծ խնդիր, այն, որ մեր կարծիքը, մեր անձը կարող է ավելի կարևորվել, որ այն ավելի կարևոր դառնա, քան այն, ինչ ես իմ եղբոր հետ միասին ունեմ՝ Քրիստոսին, հավատը, ապագան: Քույրեր և եղբայրներ, այդպես չի լինի: Եկեք հաղթահարենք մեզ բաժանող բաները և հստակեցնենք, որ մեզ համար Քրիստոսը ամենակարևորն է, իսկ նրան մենք միասին ունենք:

Միասնության մեջ ապրելը նշանակում է նաև պատրաստ լինել ինչ-որ բան կիսելու: Սա սկսվել է Հովհաննես Մկրտչից: Երբ այդ մասին նա ասաց, դա լավ չընդունվեց: Բայց նա շատ հստակ ասում էր հրեային՝ ով երկու վերնաշապիկ ունի, թող մեկը տա նրան, ով չունի: Այն ժամանակ դա լավ չընդունվեց, իսկ այսօր՝ դեռ ավելի վատ: Այստեղ խոսքը մեր փողի, տան, ավտոմեքենայի մասին չէ, խոսքը մտածելակերպի մասին է: Այն ժամանակ Սուրբ Հոգին ուզում էր Հովհաննես Մկրտչի միջոցով մարդկանց ուշադրությունը հրավիրել՝ դու պետք է տեսնես քո մերձավորին, դու պետք է ընդունես նրա կարիքները և անտարբեր չանցնես

դրանց հանդեպ: Դա էր թաքնված այդ խոսքի ներքո: Ոչ միայն քո մասին մտածիր, այլ հաղթահարիր եսասիրությունը, անձնասիրությունը և մերձավորի կարիքներին ուշադրություն դարձրու: Դա է նշանակում քրիստոնյա լինելը: Եվ պետք է մի քիչ էլ առաջ նայել: Պետք է նաև սեփական սերունդների համար մտածել: Սա թեմա է մեր հասարակության մեջ: Յուրաքանչյուր սերունդ իր սեփական կարիքներն ունի, այլ ցանկություններ ունի և դրա համար եսասիրաբար է պայքարում: Եկեք տեսնենք մեր սեփական սերունդներին և տեսնենք նաև այն սերունդներին, որոնք մեզնից հետո են գալու, հաշվի առնենք նրանց կարիքները: Եկեք ավելի հեռուն տեսնենք, քան մեր սեփական համայնքը, եկեք ավելի հեռուն տեսնենք, քան մեր սեփական երկիրը, և նաև՝ ամեն տեսանկյունից մերձավորի կարիքները տեսնենք ու անդրադառնանք դրանց :

Միասնությունն ապրել - Պողոսը սա հրաշալի ձևով է նկարագրում, նա բերում է Քրիստոսի մարմնի պատկերը: Դա մի հրաշալի բացատրություն է, մի հրաշալի պատկեր է միասնական կյանքի համար՝ Քրիստոսի մարմինը: Եվ նա հստակորեն ասում է՝ աչքը չի կարող ասել, ես կարիք չունեմ ձեռքի: Գլուխը չի կարող ասել, ես կարիք չունեմ ոտքի: Միասնության մեջ ապրելը նշանակում է, որ դա Աստվածահաճո է, որովհետև Աստված հաստատ գիտի, որ նրանք ծառայություն ունեն կատարելու և միայնակ դա չեն կարող անել: Եթե Քրիստոսի համայնքը ուզում է իր ծառայությունը կատարել, ապա նա դա պետք է միասնական անի: Միայնակը չի կարող այն ծառայությունը կատարել, ինչը Հիսուսն է նրանից սպասում: Սա մեկ կողմն է: Դա կարող ենք մենք միասին անել որպես եկեղեցի, որպես Հիսուս Քրիստոսի համայնք: Մենք կարիք ունենք Քրիստոսի մարմնի: Դա հատկապես կարևոր է սպասավոր եղբայրների ու համայնքի միջև հարաբերությունների համար: Այնպես չէ, որ եթե սպասավոր եղբայրները տեղում են, ապա համայնքն էլ է այդտեղ: Համայնքը չի կարող առանց սպասավոր եղբայրների, բայց որ սպասավորներն են միայն նրա փրկությունն ապահովում,այդպես չէ: Նրանք երկուսն էլ մեկը մյուսի կարիքն ունեն: Այլապես ոչինչ չի լինի: Նրանք օժանդակում են մեկը մյուսին, աղոթում են միմյանց համար: Դա Աստվածաշնչում գեղեցիկ է նկարագրված : Խոսքն այն մասին է, որ մեկը ցանում է, իսկ մյուսը՝ բերքը հավաքում: Ուրեմն՝ առաջադրանքները, պատասխանատվությունը տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր պատասխանատվությունը: Մեկը ունի այս, մյուսն ունի այլ շնորհ, երրորդն էլ ունի այլ առաջադրանք- դրանք շատ տարբեր են: Երբ յուրաքանչյուրն իր առաջադրանքն իր տեղում կատարի, մենք կունենանք միասնական ուրախություն, իսկ դա ուրախությունն է Հիսուս Քրիստոսով:

Սիրելիներս, միասնությունը նշանակում է նաև պատրաստ լինել տալ ինչ-որ բան ուրիշին- և նաև, իսկ սա կարևոր կետ է- պատրաստ լինել ուրիշներից ինչ-որ բան ստանալու: Կարելի է ասել, որ հեշտ է ինչ-որ բան ընդունելը: Սակայն, դա այնքան էլ այդպես չէ: Ես նկատել եմ, որ ավելի շատ են այն մարդիկ, ովքեր ասում են, որ ուրիշներից ոչինչ չեն վերցնում՝ ես չեմ ուզում կախման մեջ լինել, ես չեմ ուզում կապված լինել, ես ուզում եմ ինքնուրույն լինել: Նրանք հրաժարվում են ուրիշներից ինչ-որ բան ստանալ, որովհետև չեն ուզում կախման մեջ լինել: Նրանք պարզապես ուզում են ունենալ ավելի քիչ, բայց ուրիշներից ոչինչ չուզել: Սա հասարակության մեջ առկա երևույթ է, երբ ոչինչ չեն ուզում մյուսներից, որովհետև չեն ուզում նրանցից կախման մեջ լինել, նրանց պարտք լինել, ուզում են ինքնուրույն լինել: Սա ամբողջովին հակառակ է Քրիստոսի մարմնի պատկերին և դրանով էլ՝ Աստծո կամքին: Աստծո կամքն այն է, որ մենք՝ ինչպես տալիս ենք, այնպես էլ ստանում ենք, որ մենք ողջախոհ ենք և ասում ենք, որ ես առանց մյուսների չեմ կարող: Սա վերաբերում է նաև միասնության մեջ ապրելուն: Եկեք 2022-ին ևս աշխատենք այն մտքով, որ մենք ուզում ենք ապրել միասնության մեջ, մենք ուզում ենք հաղթահարել բաժանող բաները, որովհետև մեզ համար ամենակարևորն է՝ մեկ Տերը, մեկ նպատակը, մեկ ոգին, մեկ կոչումը: Մենք տարբեր ձևով ենք մտածում, տարբեր կարծիքներ ունենք, դա այդպես էլ մնում է – ես մնում եմ ֆրանսիացի, դուք մնում եք գերմանացի- ամեն ինչ կարգին է: Ամենակարևորն այն է, ինչը մենք միասին ունենք: Մենք պետք է նաև մտածենք, թե էլ ինչպես կարող ենք ավելի շատ ու ինտենսիվորեն կիսել ունեցածը: Բոլոր տեսանկյուններից պետք է մերձավորի կարիքներն ընդունել և անդրադառնալ դրանց, մենք պետք է իսկապես ծառայենք որպես Քրիստոսի մեկ մարմին: Միասին ծառայությունը իրականացնենք, մեկս մյուսիս ինչ-որ բան տանք և ինքներս պատրաստ լինենք ուրիշներից ինչ-որ բան ընդունելու, որովհետև մենք գիտենք, որ միայնակ ոչինչ չենք կարող անել:

Մասնության չորրորդ և վերջին ասպեկտը դա ողջերի ու մահացածների միասնությունն է: Դա ևս շատ գեղեցիկ է: Մենք չենք ապրում բաժանված աշխարհում: Սա մի համայնք է, մի եկեղեցի՝ տեսանելի և անտեսանելի, ողջերի ու մահացածների: Ես անդրադառնում եմ նրան, ինչ նշել եմ, մեզնից առաջ եղած սերունդները

,,Շրջանային առաքյալի օգնական Հելգե Մուչլերը հրավիրվել է քարոզի / վերևում/,,
Առաքյալ Ռալֆ Վիցարիեսմանը խոսում է այն մասին, որ պետք է հարաբերությունները միշտ կարգավորել / վերևում/

Գլխավոր առաքյալը նվիրաբերում է օրհնություն առաքյալ Էդմունդ Սթեգմայերի /հանգստի անցած/ և կնոջ՝ Գերդայի ոսկյա հարսանիքի առիթով / աջում/

ցանել են, իսկ մենք բերքահավաք ենք անում: Մենք ապրում ենք նրանց աշխատանքով, նրանց զոհաբերությամբ, նրանց կառուցածով: Նրանք ցանել են, իսկ մենք բերքահավաք ենք անում, բայց ուրախությունը միասնական է: Սա վերաբերում է նաև անդրշիրիմյան աշխարհի հոգիներին՝ մենք ունենք մի մարմին, մենք պատկանում ենք մի եկեղեցու, ունենք մի ոգի, Սուրբ Հոգուն, մեկ հաց՝ Սուրբ Հաղորդությունը այս և անդշիրիմյան աշխարհի համար, մենք ունենք մեկ ապագա, մենք ունենք մեկ հավատ: Երբ հիշում ենք անդրշիրիմյան աշխարհի մեր սիրելիներին, ապա տեսնում ենք նրանց, թե ինչպիսին են եղել նրանք առաջ, ինչպիսին են հիմա: Քույրեր և եղբայրներ, նրանք ինչ որ ձևով ներկա են յուրաքանչյուր ժամերգության և կրում են Սուրբ Հոգու ներգործության հետևանքները: Նրանք կանգնած չեն մնացել, նրանք եկել են մեզ հետ: Նրանք չեն մնացել իրենց կարծիքին, ինչ ունեին 50 կամ 10 տարի առաջ-Սուրբ Հոգին նրանց իր հետ է տարել: Եվ միասնության մեջ ապրելուն պատրաստ լինելու պայմանները հավասարապես վերաբերում է այս և անդրշիրիմյան աշխարհներին: Դրանում մենք պետք է համոզված լինենք: Երբ նրանք նայում են մեզ, չեն հուզվում և ասում՝ վայ, ինչպիսին է այդ ամենը այսօր: Նրանք ունեն Սուրբ Հոգու նույն ուսմունքը, և ես կարող եմ հավատալ, ես բացարձակ համոզված եմ դրանում, նրանք մեզ հետ գալիս են, այո, նրանք ունեն Աստծո նույն խոսքը:

Նրանք այսօր այնպես են մտածում, ինչպես մենք ենք կամ պետք է մտածելիս լինենք, եթե հետևենք Սուրբ Հոգուն: Մեկ ոգի, մեկ նպատակ, մեկ ուրախություն: Գեղեցիկ է, որ մենք այս վստահությունն ունենք՝ չկան բաժանված աշխարհներ, կան տեսանելի և անտեսանելի աշխարհներ, սակայն, մեզ հետ են նրանք՝ անդրշիրիմյան աշխարհի մեր սիրելիները: Նրանք ապրում են նույն ժամերգությունը, նրանք գնում են նույն ճանապարհով և ունեն նույն նպատակը: Երբ Տերը գա, կտանի մեզ իր մոտ՝ ողջերին և մահացածներին, իսկ հետո մենք կդառնանք մեկ սիրտ ու մեկ հոգի: Մենք կունենաք մեր ոգին, մեր հոգին, և մենք կունենանք մեկ մարմին՝ հարության մարմինը: Այնպես չէ, որ հոգին հրեշտակի նման մեր շուրջն է լինելու, մենք նորից կունենաք մարմին, և կճանաչենք միմյանց, որ դա՝ դու ես, իսկ սա՝ ես եմ, անձը կմնա, անհատականությունը կմնա, միայն կհեռանա ոչ գեղեցիկը: Մենք՝ բոլորս, կատարյալ կլինենք Քրիստոսով և Տիրոջ հետ հավիտենական միասնության մեջ կլինենք: Քույրեր և եղբայրներ, սա մեր ապագան է: Խնդրում եմ, եկեք չհեռանանք այն ամենից, ինչը շրջապատում է մեզ: Իհարկե սա լուրջ է, բայց սա այնքան լուրջ չէ, որ մենք մոռանանք՝ Տերը շուտով գալու է: Ամեն:,,

Հիմնական մտքեր

- Սովորելը, միասնության մեջ ապրելը Քրիստոսի գալստյանը մեր հոգևոր նախապատրաստության մի մասն է:
- Մենք սովորում ենք հաղթահարել մեր տարբերությունները, միմյանց հետ համերաշխ լինելը և միասին Քրիստոսին ծառայելը :

Դավիթն ու Հովնաթանը

ըստ թագավորություններ Ա 18-20-ի՝

Այն բանից հետո, երբ Դավիթը հաղթում է այլազգի Գողիաթին, ապրում է Սավուղ թագավորի՝ Հովնաթանի հոր տանը: Դավիթն ու Հովնաթանը ընկերներ էին:

Սովորության համաձայն Հովնաթանը պետք է դառնար հաջորդ թագավորը, որովհետև նա թագավորի որդին էր: Սակայն, Աստված Դավթին ընտրեց որպես թագավորի հետնորդ:
Հովնաթանը չնախանձեց, Դավիթը նրա ընկերն էր, նա սիրում էր նրան: Որպեսզի դա նրան ցույց տա, Հովնաթանը Դավթին նվիրեց իր հագուստները, սուրը, աղեղը և գոտին: Սակայն, թագավոր Սավուղը նախանձում էր Դավթին, քանի որ Դավիթը լավ մարտիկ էր, և մարդիկ նրան ավելի էին սիրում, քան թագավորին:
Սավուղը գնալով ավելի էր զայրանում և մի օր էլ Դավթի վրա նետեց գեղարդը, ով այդ պահին քնար էր նվագում: Դավիթը կարողանում է խույս տալ, բայց Սավուղն ուզում էր Դավթին սպանել:
Հովնաթանը զգուշացնում է իր ընկերոջը. ,,Թաքնվիր թաքստոցում մինչև վաղը: Ես կխոսեմ իմ հոր հետ և քեզ կասեմ նրա մտադրության մասին,,:
Հովնաթանը խոսում է իր հոր հետ և Դավթի մասին բարի խոսքեր է ասում.,, Նա միշտ պայքարել է քեզ համար, նա հաղթեց հսկա Գողիաթին, նա երբեք քո դեմ ոչինչ չի արել: Ինչու՞ ես ուզում անմեղ մարդուն սպանել,,:
Սավուղը խոստանում է իր որդուն, որ Դավթին ոչինչ չի անի: Հովնաթանը դա հայտնում է Դավթին: Նա եկ է վերադառնում:
Սակայն, թագավորը մոռանում է իր խոստումը և կրկին գեղարդ է նետում Դավթի վրա: Նա կարողանում է նորից խույս տալ:
Այդ նույն գիշեր Դավիթը փախչում է: Նա նորից եկ է գալիս, որպեսզի իր ընկեր Հովնաթանին հարցնի.,, Հովնաթան, ի՞նչն եմ ես սխալ արել: Ինչու՞ է քո հայրն ուզում սպանել ինձ,,:
Հովնաթանը պատասխանում է.,, Դու չպետք է մեռնես: Իմ հայրը դա ինձ ասել է,,:
,,Այո, -ասում է Դավիթը,- բայց քո հայրը գիտի, որ մենք ընկերներ ենք, գուցե դրա համար նա չի ուզում քեզ ոչինչ ասել,,:
Հովնաթանը ուզում էր իմանալ,

արդյոք Դավիթը ճիշտ է: Այդ նպատակով նա ուզում է ծառաներից մեկի հետ գնալ և երեք նետ արձակել: Եթե նա իր ծառային, ով հավաքում էր նետերը, ասի. ,, Նետերը ընկած են քո հետևում,, ; ուրեմն ամեն ինչ կարգին է և Դավիթը կարող է վերադառնալ թագավորի տուն: Բայց, եթե նա ծառային ասի.,, Նետերը ընկած են քո առաջ,, ; ապա դեռ Դավթին վտանգ է սպառնում և նա պետք է փախչի:
Ընկերները նորից հավատարության խոստում են տալիս միմյանց: Դավիթը թաքնվում է դաշտում: Այդ ընթացքում պալատում մեծ տոն էր տոնվում: Սավուղը տեղեկանում է, թե ինչու Դավիթը ներկա չէ: Հովնաթանը արդարացնում է իր ընկերոջ հեռու գտնվելու պատճառը: Սավուղն այնքան է բարկանում այն բանի համար, որ Հավնաթանը Դավթի կողմն է անցել, որ գեղարդը նետում է սեփական որդու վրա: Հովնաթանն արդեն հասկանում է, որ Դավիթն իրավացի է- նա պետք է փախչի: Այդ գիշեր Հովնաթանը չի կարողանում ոչ մի բան ուտել, այնքան տխուր էր:
Իր ծառայի հետ նա գնում է դաշտ, որպեսզի Դավթին զգուշացնի: Նա երեք նետ է արձակում և ձայն տալիս ծառային. ,, Նետերը ընկած են քո առաջ,,: Նա ծառային է տալիս նետերն ու աղեղը և ուղարկում: Նա ուզում էր Դավթին մեկ անգամ էլ տեսնել: Նրանք հրաժեշտ են տալիս միմյանց և երկուսով լաց լինում, որովհետև նրանք ստիպված էին բաժանվել:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 06/2021, ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱԼՎԻՆԻՆ՝ ԼՈՆԴՈՆՈՒՄ / ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ/

Ողջույն: Սա ես եմ՝ Կալվինը, իմ նապաստակներ Պուֆֆի և Մորբելի հետ: Ես տասը տարեկան եմ, մի քիչ կպատմեմ իմ ու իմ հայրենի քաղաք Լոնդոնի մասին:



Իմ ծնողներ Էլլենն ու Միխայելը ճարտարապետներ են: Երբ մենք միասին ճանապարհորդում ենք, միշտ ուշադիր նայում ենք շենքերին, մենք հաճախ ենք այցելում ցուցահանդեսներ:

Մայրս երիտասարդ տարիքում հիվանդացել է դեմենց /սկլերոզի տեսակ/ կոչվող հիվանդությամբ: Դա նշանակում է, որ նա աստիճանաբար կորցնում է իր բոլոր հիշողությունները: Դրա համար էլ արդեն երկու տարի է, ինչ նա ապրում է խնամքի կենտրոնում: Յուրաքանչյուր երկու օրը մեկ մենք այցելում ենք նրան և լավ եղանակի դեպքում նրա հետ զբոսնում ենք պուրակում:

Իմ ընտանիքի մի մասը ապրում է Գերմանիայում: Ես հաճույքով եմ այցելում նրանց Սուրբ Ծննդյան տոներին և ամռանը: Պապիկիս 70-ամյակին բոլորս հավաքվեցինք և տոնեցինք: Նա և իմ հայրը համապատասխանաբար ունեն չորս քույր-եղբայրներ, այսինքն՝ մենք մի մեծ զեղեցիկ ընտանիք ենք:

Ես սիրում եմ տիպիկ անգլիական նախաճաշ պատրաստել ինձ համար՝ չորացրած հացով ձվաձեղ, շիլա / վարսակի փաթիլներով/ կամ բլիթ:

Այստեղ դուք տեսնում եք ինձ իմ դպրոցական առաջին օրը՝ դպրոցական համազգեստով, այդ ժամանակ ես չորս տարեկան էի: Ես այցելում եմ երկլեզու դպրոց՝ մեզ դասավանդում են անգլերենով և գերմաներենով:

Լոնդոնը Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքն է: Երբ մենք այցելուներ ենք ունենում, շրջում ենք քաղաքով: Սուրբ Պողոսի տաճարը աշխարհի ամենամեծ եկեղեցին է: Ակուստիկան շատ զարմացնող է՝ երբ որևէ մեկը եկեղեցում շշնջում է, սրահի հեռու անկյունից կարելի է հասկանալ նրա ասածը: Դրանից բացի, Լոնդոնի հայտնի տեսարժան վայրերն են Թաուեր կամուրջը, Լոնդոնի աչք հսկա անիվը կամ մոմե արձանների Մադամ Թյուսոյի թանգարանը, որտեղ կարելի է տեսնել հռչակավոր մարդկանց մոմե կերպարները:

Լոնդոնի կենտրոնի իմ համայնքում ես հաճույքով հանդիպում եմ այլ երեխաների հետ: Ժամերգություններից հետո մենք հաճախ ենք մտնում այնտեղ և միասին ճաշում: Այստեղ կան ամբողջ աշխարհի համեղ ուտեստները, քանի որ մեր համայնքում հավաքվում են շատ տարբեր երկրների մարդիկ:

Կղզում ապրելու լավն այն է, որ երբեք հեռու չեն լինում ծովափից: Ես հաճույքով ծովի ափն եմ գնում խեցգետիններ հավաքելու, որոնց ես վերջում նորից ծովն եմ նետում: Դրանից բացի, ես հաճախ եմ հեծանիվ վարում, սովորում եմ կարատե կամ ձեռքի աշխատանք: Այս վիշապները ես դպրոցում եմ պատրաստել, երբ մենք լսեցինք վիշապասպան Գեորգի մասին պատմությունը:

Այլյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, շրջապարակություն 06/2021; Լուսանկարները՝ մասնավոր, ձեռքերունը՝ ©ibom; ©siraanamwong; © Tatyana Okhitina - stock.adobe.com

Լուսանկարները՝ © fizkes - stock.adobe.com

Պահպանել կյանքը- որտեղ որ հնարավոր է

Անգամ, եթե անձնական հասկանալի պատճառներ կան հղիությունն ընդհատելու համար, եկեղեցական տեսակետը պետք է առանձնահատուկ կշիռ ունենա որոշման կարևորության պատճառով:

Հղիության ընդհատման ներքո հասկանում են ոչ կանոնավոր հղիության նպատակադրված ընդհատումը: Սպանվում է սաղմը: Հասարակության մեջ հղիության ընդհատման թույլատրությունը վիճարկելի թեմա է: Վիճարկվում են սաղմի կյանքի իրավունքը, կնոջ որոշման իրավունքը, ծնողների սեփական պատասխանատվությունը, ինչպես նաև կրոնական պատվիրանները և էթիկական պատկերացումները: Դրանց հետևում են տարբեր դատապարտումներ և իրավական կարգավորումներ:

Հղիության ընդհատումը բժշկական ռիսկերի հետ մեկտեղ կարող է նաև ֆիզիկական հետևանքներ ունենալ: Դրա համար էլ մայրերը կամ ծնողները որոշումից առաջ պետք է տեղեկանան բժշկական կանխատեսման մասին, ինչպես նաև դիտարկեն հղիության կամ հղիության ընդհատման սոցիալական ու ֆիզիկական ասպեկտները:

Կյանքի բարեխոսուհին

Կյանքը տրված է Աստծո կողմից: Մարդկային կյանքը պետք է պաշտպանել և պահպանել: Նորառաքելական եկեղեցին կյանքի բարեխոսուհին է:

Կյանքը սկսվում է ձվաբջիջների և սերմնաբջիջների միավորումից: Արդեն բեղմանվորված ձվաբջիջը անհատական կյանք է, որը վայելում է իրավունք և պաշտպանություն: Երեխայի կյանքի իրավունքը երբեք չպետք է ուշադրությունից դուրս թողնել:

Երեխաները քրիստոնեական հավատի տեսանկյունից Աստծո նվեր են, և յուրաքանչյուր մարդ ցանկալի է Աստծոն, ստեղծված և սիրված է նրա կողմից: Ձվաբջիջի բեղմնավորման պահից սկսած մարդը համարվում է հոգի ստացած:

Հինգերորդ պատվիրանի խախտում

Նորառաքելական եկեղեցին մերժում է հղիության ընդհատումը, քանի որ այն հինգերորդ պատվիրանի խախտում է: Դրա հետ կապված Աստծո առաջ մեղքի ծանրությունը կարող է տարբեր լինել, միայն Աստված է այն չափում: Իր արարքի մասին մեղք գործողի իմանալն ու ցանկությունը որոշիչ է, որոշակի ներգործությունները ևս կարող են վճռական դեր խաղալ, ինչպես օրինակ, կյանքի ընդհանուր իրավիճակը, հասարակական կառուցվածքները, պետական իրավական նորմերը, կարիքները:

Փորձը ցույց է տալիս, որ հավատացյալ քրիտոնյաների մոտ ևս կարող է հղիության ընդհատումը թեմա դառնալ: Թեև հղիության ընդհատման պատճառները անհատական են, սակայն, դրանք կախված են նաև հասարակական միջավայրի վարքագծից: Եթե հղիության դեպքում մոր կյանքը բժշկական հիմնավորմամբ վտանգված է, պետք է փրկվի մոր կյանքը: Այս պարագայում ևս խախտվում է հինգերորդ պատվիրանը, սակայն դեպքում մեղքը այս քիչ է: Հղիության ընդհատման այլ շարժառիթների պարագայում կարող են այլընտրանքներ լինել, երեխային կրել և ծնվելուց հետո որդեգրման տալ:

Սեփական պատասխանատվություն և հոգու խնամք

Որոշման կարևորության պատճառով առաքյալը պետք է մասնակցի որոշման պրոցեսին : Նա պետք է կատարի հոգու խնամք: Մայրերը կամ զույգերը, ովքեր բժշկական, անձնական և աստվածաբանական տեսակետներին են բախվում, պետք է ապավինեն նրան, որ եկեղեցին հարգում է սեփական պատասխանատվության ստանձնումը հղիության կամ հղիության ընդհատման առումով և հոգևոր խնամք է տանում:

Մեղքի և պարտքի վերաբերյալ նրանց իմացությունից և դրա հետ կապված հետևանքներից ելնելով՝ եկեղեցին ծնողներին խորհուրդ է տալիս հղիության ընդհատման դեպքում խոստովանել իրենց կատարելիք մեղքը Աստծուն և ներում խնդրել: Հղիության ընդհատումը հասարակական կյանքում զգայուն ոլորտ է: Սպասավորների կողմից պահպանվող գաղտնիությունը մեծ նշանակություն ունի:

Կյանքի վտանգ մայրերի համար

Եթե կնոջ համար ախտորոշվում է միանշանակ, անկասկածելի կյանքի վտանգ հղիության հետ կապված, ապա եկեղեցին ձեռնպահ է մնում հղիության ընդհատմանը դեմ լինելուց և իր համաձայնությունն է տալիս մոր կյանքը փրկելուն: Համապատասխան իրավիճակներում խնամող բժիշկները ապահովությունից ելնելով՝ հնարավորինս հղիությունը ընդհատելու խորհուրդ են տալիս, մինչ կյանքին վտանգ սպառնալը: Այստեղ երաշխավորված է հոգատար կշռադատումը:

Երեխայի լուրջ խեղումները

Երեխայի լուրջ խեղվելու պատճառները կարող են լինել գենային արատները, քրոմոսոմների խախտումները և արտաքին գործոնների ազդեցությունը հղիության ընթացքում, ինչպիսիք են ալկոհոլը, ինֆեկցիոն հիվանդությունները կամ դեղորայքի կողմնակի ազդեցությունները: Շատ երկրներում կան բժշկական ուղեցույցներ, որոնցով բարձր ռիսկայնության պարագայում, օրինակ, ժառանգական հիվանդությունների կամ մոր մեծ տարիքի դեպքում, բժիշկները խորհուրդ են տալիս նախածննդյան հետազոտությունների և ախտորոշման: Բժշկական այս նախածննդյան ախտորոշումը կենտրոնանում է ենթադրվող արատների վրա: Այն չի կարող վեր հանել բոլոր հնարավոր սխալները, հատկապես հաշմանդամության ծանրության աստիճանը:

Մյուս կողմից, չեն կարող երաշխավորել դրանց բացակայությունը նաև առողջ մարդկանց դեպքում: Շատ երկրներում պարտականություն կա, որ ախտորոշման շրջանակում անցկացվի խորհրդատվական զրույց նման հետազոտությունների հնարավորությունների և հետևանքների վերաբերյալ, որպեսզի հեշտացնեն մայրերի կամ ծնողների որոշումը: Ծնողները իրավունք ունեն ,, չիմանալ,, և կարող են մերժել առաջարկվող հետազոտությունները: Եթե ախտորոշվում է մարմնական լուրջ արատ կամ հոգեկան խանգարում և դա տեղեկացվում է ծնողներին, հաճախ ակամայից ցուցաբերվում է այնպիսի արձագանք, որը նմանվում է սգալու արձագանքի: Առողջ երեխա ունենալու հույսը խաթարվում է, նրանք ,,կորցնում են,, նրան ու առաջին պահից հրաժարվում խեղանդամ երեխայից: Այս պարագայում կարող է հղիության ընդհատման խորհուրդը լուծում լինել: Ծնողների մերժող պահվածքը խեղանդամ երեխայի հանդեպ կարող է հղիության ընթացքում փոխվել այնպես, որ երեխան սիրով ընդունվի:

Խեղանդամ մարդկանց և նրանց ընտանիքների շրջանում եղած փորձից կարելի է ամրագրել՝

- Կյանքն ինքը -անկախ խեղանդամությունից- արժեքավոր է:
- Չնայած խեղանդամությանը՝ կյանքը կարող է լցված լինել:
- Ըստ կանոնի՝ խեղանդամները գնահատում են իրենց կյանքը և հնարավորիս գոհ են դրանից:
- Հազվադեպ չէ, երբ ծնողները իրենց խեղանդամ երեխայի հանդեպ առանձնահատուկ սիրով են լցվում:
- Խեղանդամ կամ հիվանդ մարդիկ հաճախ հատուկ ունակություններ են ունենում, օրինակ, տրիսոմիա 21- ով երեխաները կարող են զարգացնել բարձր սոցիալական մակարդակ, որը կարող է հարստացնող լինել նման երեխա ունեցող ընտանիքների համար:
- Խեղանդամ երեխաները կարող են կայունացնող ազդեցություն ունենալ ամուսնության/ ընտանիքի վրա:
- Օգտակար կարող է լինել նման ընտանիքների հետ շփվելը և օգնության կարիք ունեցող խմբերին ընդունելը:

Նախածննդյան ախտորոշման ժամանակ արատները դիտարկվում են առանձին: Երբ ծննդից հետո ապրելը երաշխավորված չէ կամ կարճ ժամանակ անց երեխաները պետք է մահանան, նման դեպքերում բժշկական տեսանկյունով հաճախ հղիության ընդհատման առաջարկ է լինում:

Անգամ, եթե մարդկային տեսանկյունից հասկանալի պատճառներ կան, լուրջ խանգարումներ ունեցող երեխային մերժելու որոշումը կայացնելիս՝ կարևորության պատճառով պետք է հաշվի առնվի նաև եկեղեցական տեսակետը: Եթե կա ցանկություն հոգու խնամքի զրույցների, առաջին հերթին առաքյալը նրանց տրամադրության տակ է, ով և կկատարի հոգևոր խնամք: Պետք է ամրագրել, որ հիվանդ մարդու սպանությունը կամ նմաններին չցանկանալը հիմնականում դեմ է քրիստոնեական ուսմունքին, այդ թվում նաև այն կյանքի սպանությունը, որը հավանաբար ծնվելուց հետո մահանալու է կամ կարճ ժամանակ է ապրելու: Հոգին խնամողը՝ անկախ կայացրած որոշումից, պետք է երաշխավորի հասկանալի, առանց պայմանների հոգևոր խնամք :

Հղիություն բռնաբարման հետևանքով

Կանայք, ովքեր բռնաբարվել են, ըստ կանոնի վնասվում են թե մարմնապես, թե հոգեպես: Նրանք տառապում են հետտրավմատիկ սթրեսային խանգարումներից: Սա ներառում է իրավիճակի վերապրում, այսպես կոչված, «ֆլեշբեքեր», որն արտահայտվում է մղձավանջներով, էմոցիոնալ վարքագծով, երկչոտությամբ, չափից ավելի հուզմունքով, վախերով և սոցիալական շփումներից ու սեռական հարաբերություններից խուսափելով:

Եթե հղիությունը տեղի է ունենում բռնաբարության հետևանքով, ապա երեխայի միջոցով իրավիճակի վերապրումը կարող է ուժեղանալ: Բռնաբարողի նկատմամբ մոր ագրեսիան և նրա վրդովմունքը (սովորաբար անգիտակցաբար) կարող են ուղղված լինել նաև անցանկալի երեխային: Եթե կինը գիտակցում է դա, կարող է հանգեցնել մեղքի բարդույթների և հոգեկան այլ խանգարումների: Լարվածության այս դաշտը նույնպես կարող է էական ազդեցություն ունենալ երեխայի զարգացման վրա:

Խնդիրներ, որոնք կարող են նշանակություն ունենալ բռնաբարված կնոջ հոգևոր խնամքի ժամանակ՝

- Նա վերապահումներ կունենա խնդիրը՝ բարձրաձայնելու հարցում, հատկապես՝ տղամարդու /հոգևոր խորհրդատուի հետ/: (Եկեղեցում կարող են լինել համապատասխան քույրեր, որոնք այս դեպքերում կարող են լինել կոնտակտային անձինք):
- Նրա ինքնագնահատականը կարող է կոտրվել:
- Նա կարող է կեղտոտված զգալ:
- Որոշ կանայք իրենց սխալմամբ մեղսակից են զգում:.

Սկզբունքորեն պետք է խուսափել կնոջ մեջ բռնաբարության մեղսակցությունը փնտրելուց: Կնոջը խորհուրդ է տրվում հոգեթերապևտիկ աջակցություն: Նա չպետք է հետ կանգնի քրեական բողոք ներկայացնելուց: Հոգին խնամողները ծնված կյանքի՝ ջատագովներ են, հետևաբար, նրանք մի կողմից՝ առավելագույն ուշադրություն կդարձնեն կնոջ ապրումներին, բայց մյուս կողմից՝ կխոսեն նաև երեխային մինչև վերջ կրելու և նրան որդեգրման հնարավորություն տալու մասին:

Խնամակալության տակ գտնվող կանայք

Կախված հիվանդության տեսակից և ծանրությունից՝ ծանր մտավոր հաշմանդամները կամ ծանր հոգեկան հիվանդները չեն կարող ստանձնել անձնական պատասխանատվություն, ուստի օրինական ներկայացուցչին (ծնողներ, խնամակալ) է հանձնարարվում ստանձնել այդ պատասխանատվությունը: Այս դեպքերում, որպես կանոն, տուժած անձի համար հնարավոր չէ խնամել երեխային որպես հայր կամ մայր:

Նման իրավիճակներում դիտարկվում է, թե արդյոք մայրն ու երեխան պատասխանատվություն են կրելու հղիությունը ավարտին հասցնելու համար՝ վերը

նշված պատճառներով: Եկեղեցին չի հրաժարվելու կյանքի նկատմամբ իր դիրքորոշումից, բայց ի վերջո հարգելու է պատասխանատուի կայացրած որոշումը:

Անչափահասների հղիություն

Անչափահասների հղիության դեպքում կարող են առաջանալ զգալի խնդիրներ, եթե ուսումը դեռևս չի ավարտվել, և անհատական զարգացումը մինչև չափահաս տարիքը թերի է թվում: Այս դեպքում հղի կինը հաճախ սեփական եկամուտ չի ունենում: Հետևաբար, որպես կանոն, , նա չի կարող ինքնուրույն խնամել երեխային, այնպես որ, նման դեպքում հղիությունը շարունակելու որոշումը հազվադեպ է կայացնում միայն հղի կինը:

Նրան իր իրավիճակում աջակցելու և նոր կյանքը ընդունելու համար երեխայի հայրը, հղի կնոջ և երեխայի հոր ծնողները նույնպես պետք է ներգրավվեն խորհրդատվության և հոգևոր խնամքի մեջ: Դրա համար անհրաժեշտ է հղի կնոջ համաձայնությունը: Խորհրդատվական կենտրոնները կարող են տեղեկատվություն տրամադրել ֆինանսական և սոցիալական աջակցության վերաբերյալ:

Հղիության ընդհատում և մեղքի զգացում

Հղիության ընդհատումը հինգերորդ պատվիրանի խախտում է և հետևաբար՝ մեղք: Երկու ծնողներն էլ պատասխանատու են հղիության ընդհատման համար: Մեղքի հետ կապված Աստծո առաջ պարտքը կարող է փոքր լինել՝ ներկայացված որոշ ուղեկցող հանգամանքներով պայմանավորված: Այնուամենայնիվ, գործնական փորձը ցույց է տալիս, որ տուժածները երբեմն ունենում են մեղքի զգալի զգացումներ: Աստծուց ներում խնդրելը և ողորմածություն ստանալը կարող են նաև օգնել հղիության ընդհատման որոշման հոգեբանական վիճակին:

Որդեգրումը որպես այլընտրանք

Որպես պլանային հղիության ընդհատման այլընտրանք՝ երեխային որդեգրման տալու հնարավորություն կա: Որդեգրման (երեխային ընդունելու փոխարեն) դեպքում ստեղծվում է ծնող-երեխա հարաբերություն՝ առանց ծնողական պատկանելության:

Ի լրումն հայտնի գաղտնի որդեգրման, որում չկա որևէ կապ երեխայի կենսաբանական ծնողների և նրա ու նրա նոր ընտանիքի միջև, կա «կիսաբաց որդեգրման» հնարավորություն, որի դեպքում չեզոք հասցեի միջոցով կարող են պահպանվել կենսաբանական ծնողների և երեխայի միջև կոնտակտը՝ նամակների և լուսանկարների ձևով: «Բաց որդեգրման» դեպքում կենսաբանական ծնողներն ու որդեգրողները ճանաչում են միմյանց և մշտական կապի մեջ են: Բաց որդեգրումները հաճախ տեղի են ունենում ընտանիքում կամ ընկերների շրջանում:

Կանխարգելում հակաբեղմնավորման միջոցով

Պաշտպանվում է ընտանիքի այն պլանավորումը, երբ անցանկալի հղիությունը կանխելու նպատակով օգտագործում են մեթոդներ կամ դեղամիջոցներ, որոնք խանգարում են ձվաբջիջների և սերմնաբջիջների միաձուլումը, որպեսզի հետո հղիության ընդհատում տեղի չունենա:

Կարճ հայտարարություն

Նոր առաքելական եկեղեցին իրեն տեսնում է որպես կյանքի ջատագով: Արդեն բեղմնավորված ձվաբջիջը անհատական կյանք է, որն ունի պաշտպանության իրավունք: Նորառաքելական եկեղեցին մերժում է հղիության ընդհատումը, քանի որ այն խախտում է հինգերորդ պատվիրանը: Դրանից բխող Աստծո առաջ գործած մեղքը կարող է շատ տարբեր լինել՝ կախված կյանքի պայմաններից: Նույնիսկ, եթե կան հղիության ընդհատման համար հասկանալի մարդկային պատճառներ, եկեղեցու տեսակետը պետք է առանձնահատուկ նշանակություն ունենա՝ ելնելով որոշման կարևորությունից: Մայրերը կամ զույգերը, ովքեր տեղյակ են բժշկական, անձնական և աստվածաբանական ասպեկտներին, կարող են ապավինել եկեղեցուն, որը հարգելու է հղիության ընդհատմանը կողմ կամ դեմ լինելու իրենց սեփական որոշումը, և անկողմնակալորեն հոգալու է նրանց մասին:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ- Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Լուսանկարներ՝ Ջեսսիկա Կրեմեր, Օլիվեր Դյուրթեն

Պաշտոնը, կինը և Աստվածաշունչը

«Ինչ»-ից հետո խոսքը գնում է «ով» -ի մասին: Պաշտոն հասկացության խորացումը 2021-ին նույնպես օրակարգային էր: Եղան նախնական պատասխանները և, առաջին հերթին, տրվեց մանրամասն ուղեցույց:

2014թ.-ից գործընթացի մեջ է պաշտոն հասկացողության համապարփակ ձևակերպումը: Այժմյան արդյունքները տատանվում են երկու բնության վարդապետության աստվածաբանական հիմավորման և 2019 թվականի Հոգեգալստյան տոնից սկսած պաշտոնների եռանդամ կառուցվածքի վրա կենտրոնանալու միջև:

«Ինչ»-ի պատասխաններից հետո գալիս են «ով»-ի մասին հարցերը: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը 2014թ.-ի եկեղեցու միջազգային օրը արդեն պարզաբանել է, որ հետևյալ մոտեցումը՝ «Մենք բավականաչափ տղամարդիկ չունենք, դրա համար էլ դուք՝ կանայք, պետք է քարոզեք»; լավ ելք չէ: Այնուամենայնիվ, խոսքը գնում է այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են օրինակ՝ ի՞նչ է ընդունում համայնքը:

Կինն ու տղամարդը հավասար են

2021 թվականի իր ամենամյա հարցազրույցում եկեղեցու առաջնորդը բացատրեց, թե ինչպես են այժմ ընթանում այս խորհրդակցությունները: Դրա համաձայն, որոշումների կայացումը հետևում է հիմարար հարցերին՝ Ի՞նչ է ասում Աստված: Ի՞նչ է ասում Աստվածաշունչը: Ի՞նչ է ասում եկեղեցին: Ի՞նչ է ասում տարածաշրջանային մշակույթը.

Առաջինհարցին-Աստծոկամքիմասին-արդենտրվել է պատասխան՝ հիմվելով արարչագործության աստվածաշնչյան պատմությունների վրա: 2020 թվականի նոյեմբերին շրջանային առաքյալների ժողովը դա քննարկեց և 2021 թվականի մարտից հրապարակեց ուսուցողական բրոշյուրը՝ «Կանայք և տղամարդիկ ստեղծված են Աստծո պատկերով» թեմայով, որի հիմական ասելիքն է՝

կինը և տղամարդը հավասարապես Աստծո պատկերն են: Նրանք հավասարապես անհրաժեշտ են միմյանց և ունեն նույն բնույթն ու արժանապատվությունը:

Կինը և տղամարդը հավասարապես կոչված են պահպանելու և ձևավորելու արարչագործությունը:

Շրջանային առաքյալների օգնականները, շրջանային առաքյալները և գլխավոր առաքյալը շրջանային առաքյալների համաժողովում

Աստված նրանց կառավարման կամ գործունեության տարբեր ոլորտներ չի հատկացրել:

Կանանց և տղամարդկանց առաջադրանքների ըմբռնումը տարբեր է, քանի որ այն արտացոլում է, ի թիվս այլ բաների, մարդկային հասարակության սոցիալական և քաղաքական զարգացումները:

Բովանդակությունը վեր է հեղինակից

Երկրորդ հարցը - աստվածաշնչյան այլ ապացույցների մասին- կրկնակի աշխատանք է պահանջում: Ի՞նչն է ստիպել Հիսուսին առաքյալ լինելու համար ընտրել միայն տղամարդկանց: Իսկ ի՞նչ է ասում վաղ եկեղեցին կնոջ դերի մասին:

Այս համատեքստում նույնպես Նորառաքելական եկեղեցին 2021 թվականի նոյեմբերին հանդես եկավ իր դիրքորոշմամբ՝ որպես Աստվածաշնչի մեկնաբանման ուղեցույց. Ըստ այդմ՝ բովանդակությունն է աստվածաշնչյան գրքերին տալիս է նրանց հոգևոր հեղինակությունը, այլ ոչ թե՝ հեղինակի անունը:

Որոշումը մանրամասն՝

- „«Աստված աստվածաշնչյան գրքերի իրական հեղինակն է: Աստվածաշնչյան գրությունների հեղինակությունը հիմված է նրանց աստվածային ներշնչանքի վրա և կախված չէ հեղինակներից՝ լինեն նրանք առաքյալներ և մարգարեներ, թե՝ ոչ:

Այս առումով, էկզեգետիկ բացահայտումը, թե արդյոք գրվածքն այս կամ այն հեղինակի կողմից է, թե՝ ոչ, որևէ առնչություն չունի այս գրության հեղինակության հետ:

- Առաքյալի ծառայության ուսուցանելու լիազորությունը չի ծառայում անհատական էքսեգետիկական խնդիրների լուծմանը: Այն ավելի շատ տրված է եկեղեցու ուսմունքի մաքրությունն ու նրա տեղեկացումը ապահովելու համար»:

Անկախ՝ սեփական տեմպերով

Մի բան պարզ է՝ եկեղեցու ղեկավարությունը չի ցանկանում ճնշում գործադրել որոշակի որոշմանը դեմ կամ կողմ լինելու վրա: «Թեման չափազանց կարևոր է, քան այն հապճեպ և միայն սոցիալական միտումներից ելնելով լուծելը », - ասաց գլխավոր առաքյալը շրջանային առաքյալների ամենավերջին ժողովի ժամանակ՝ «Մենք գնում ենք մեր տեմպով, որոշումներ ենք կայացնում ամբողջ Նորառաքելական եկեղեցու համար, ոչ թե այս կամ այն կողմի համար»:

Եկեղեցու առաջնորդն անդրադարձավ անցած տասնամյակների մեծ զարգացումներին, ամենից առաջ՝ եկեղեցի հասկացության բացահայտմանը գլխավոր առաքյալ Ռիչարդ Ֆեհրի օրոք և մկրտության ճանաչմանը նրա իրավահաջորդ Վիլհելմ Լեբերի օրոք: «Տարիներ պահանջվեցին»,- ամփոփում է եկեղեցու ներկայիս գործող ղեկավարը:

Այնուամենայնիվ, որոշումների կայացման ներկայիս գործընթացում կա մեկ կարևոր տարբերություն՝ հասարակայնության հետ իր աշխատանքում եկեղեցին ավելի բաց է, քան երբևէ, այս անգամ եկեղեցական լրատվամիջոցները կարող են սկզբից հետևել զարգացմանը և այն մանրամասնորեն հաղորդել բոլոր շահագրգիռ կողմերին:

Տեղեկատու

15.04.2022	Ժնև(Շվեյցարիա)
17.04.2022	Օսնաբրյուք (Գերմանիա)
24.04.2022	Համբուրգ-Էփփենդորֆ (Գերմանիա)
01.05.2022	Սիդնեյ (Ավստրալիա)
08.05.2022	Մադանգ (Պապուա Նորգվինեա)
22.05.2022	Բեռլին (Գերմանիա)
26.05.2022	Շվեբիշ-Հալլ (Գերմանիա)
29.05.2022	Բոխում (Գերմանիա)
05.06.2022	Բուենոս Այրես (Արգենտինա)
18.06.2022	Չիունդափոնդե (Զամբիա)
19.06.2022	Մազաբուկա (Զամբիա)

New Apostolic Church
International